Ուսումնական նախագծի թեմատիկ պլան
Սունկ

Առարկան՝Կենսաբանություն

Դասարանը՝ 7- րդ Ա

Տևողությունը՝ 6 շաբաթ

Նպատակը՝

Սովորողները կծանոթանան Սնկերի թագավորության հետ:

Սովորողները կհավաքեն տեղեկություններ ուտելի և թունավոր սնկերի մասի, կուսումնասիրեն իրենց տարածաշրջանում աճող սնկեր:

Սովորողները կզարգացնեն սունկ աճեցնելու հմտությունները:

Նյութեր՝

1. Դասագրքեր, հոդվածներ և առցանց ռեսուրսներ Սնկերի թագավորության մասին:2.
2. Կհավաքեն սնկեր անզեն աչքով կուսումնասիրեն նրանց կառուցվածքը:
3. Կուսումնասիրեն սնկերի աճման պայմանները,արդյունավետությունը, արդյունագործական նպատակները:
4. Կծանոթանան տարբեր սունկ աճեցնող անհատների կատարած աշխատանքներին:

Վերջնարդյունքը՝ Ստանալ Կախասունկ և սահիկաշարի միջոցով ներկայացնել աշխատանքի ընթացքը:

Ընթացակարգը՝

Շաբաթ 1:

1. Ծանոթացում Սնկերի թագավորությանը.

Սովորողները կդիտեն կարճ տեսանյութեր սնկերի թագավորության մասին:

Կսովորեն դասագրքում ներկայացրած դասանյութը, կկատարեն բորբոսասնկի աճեցում և մանրադիտակով դիտում:

Շաբաթ 2:

2. Կազմակերպչական հարցեր.

Ստեղծել աշխատանքային խումբ՝ բաղկացած 9 հոգուց:

Ուսուցիչը տալիս է խմբին հստակ առաջադրանքներ և սահմանում

վերջնաժամկերը:Նախագծային աշխատանքի տեսական մասի կատարում

/համացանց,գրադարան,խորհրդատվություն/

Շաբաթ 3:

3. Կատարված աշխատանքների ամփոփում, սխալների ուղղում ուսուցչի կողմից և նոր հանձնարարությունների տրամադրում:

Շաբաթ 4:

4. Գործնական աշխատանքի իրականացում:Կախասնկի միցելների հետ աշխատանք, խոնավության,ջերմության աճի ապահովման պայմանների ստեղծում:

Այնուհետև կվերանայեն նախորդ օրերին արծարծված թեմաները և կպատրաստվեն վերջնարդյունքի ստեղծմանը:

Շաբաթ 5:

Սնկի աճի դիտում,կատարել չափումներ ըստ օրերի, վերջնարդյունքի ստացում:

Շաբաթ 6:

Նախագծի ներկայացում.

Աշակերտները իրենց դասընկերներին և ուսուցիչներին կներկայացնեն նախագիծը և կգնահատվեն: